# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 օգոստոսի 2024 թվականի N 2357-Ա

## ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/30 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 09.08.2024թ-ի զեկուցագրով «ԿԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացրած փաստերը և պահանջը.

1. Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը Պատվիրատուի ղեկավարին ուղղված 09.08.2024թ-ի զեկուցագրով հայտնել է հետևյալը.

Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար 2024 թվականի մարտի 6-ին հայտարարված Ընթացակարգի շրջանակում մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Կարմա Գրուպ» ՍՊԸ և «ԿՈՆՏՐՖՈՐՍ» ՍՊԸ կոնսորցիումն, որի կողմից ներկայացված հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է սահմանված պահանջներին բավարարող:

Հետագայում՝ Ընթացակարգի շրջանակում 25 . 06 . 2024թ-ին ՀՀ Պետական վերահսկողական ծառայության կողմից ստացվել է Ե/1524-24 գրությունը, համաձայն որի՝ «Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար գնումների պաշտոնական տեղեկագրում (այսուհետ՝ Տեղեկագիր) հրապարակված «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի նախկին պոլիկլինիկայի շենքը Մեծամոր համայնքի վարչական շենք դարձնելու նպատակով արտաքին հարդարման աշխատանքներ»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/30» ծածկագրով գնման ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ), որի արդյունքում պարզվել է, որ 2024 թվականի ապրիլի 15-ին Տեղեկագրում հրապարակված Ընթացակարգի կնքված

պայմանագրի մասին հայտարարության համաձայն (Փ1)՝ Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած ընկերություններից մեկը «Կարմա Գրուպ» ՍՊ ընկերությունն է (ՀՎՀՀ՝ 01335546), որը Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Կոնտրֆորս» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 09104565) հետ համատեղ:

Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի՝ 2023 թվականի մարտի 20-ից «Կարմա Գրուպ» ՍՊ ընկերության տնօրեն է հանդիսանում Սամվել Աշոտի Զաքարյանը (Փ2):

Ծառայությանը հասանելի տեղեկատվական շտեմարաններում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ «Զաքարյան Շին» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 01329251) 2023 թվականի սեպտեմբերի 8-ից մինչև 2025 թվականի սեպտեմբերի 8-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ուշագրավ է այն, որ «Կարմա Գրուպ» ՍՊ ընկերության տնօրեն Սամվել Աշոտի Զաքարյանի և «Զաքարյան Շին» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ «Կարմա Գրուպ» ՍՊ ընկերության տնօրեն Սամվել Աշոտի Զաքարյանը 2022 թվականի հոկտեմբերի 14-ից մինչև օրս հանդիսանում է նաև «Զաքարյան Շին» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասի բաժնետեր և տնօրեն:...»:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: ... »:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի՝գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով նաև ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից 22.07.2024-ին ստացված № 03/26-1/16004-2024 գրությունը, համաձայն որի՝

« 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերության համաձայն մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին.

32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:...», անհրաժեշտություն է առաջացել նախաձեռնել ընթացակարգ՝ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկվել է Մասնակցինգնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կայացնել պատճառաբանված որոշումև հիշյալ որոշումը գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

1. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար 2024 թվականի մարտի 6-ին հայտարարվել է Ընթացակարգ, որի շրջանակում մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Կարմա Գրուպ» ՍՊԸ և «ԿՈՆՏՐՖՈՐՍ» ՍՊԸ կոնսորցիումն, ում կողմից ներկայացված հայտը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է սահմանված պահանջներին բավարարող:

2. Հետագայում՝ ընթացակարգի շրջանակում 25.06.2024թ-ին ՀՀ Պետական վերահսկողական ծառայության կողմից ստացվել է Ե/1524-24 գրությունը, համաձայն որի՝ «Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար գնումների պաշտոնական

տեղեկագրում (այսուհետ՝ Տեղեկագիր) հրապարակված «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի նախկին պոլիկլինիկայի շենքը Մեծամոր համայնքի վարչական շենք դարձնելու նպատակով արտաքին հարդարման աշխատանքներ»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/30» ծածկագրով գնման ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ), որի արդյունքում պարզվել է, որ 2024 թվականի ապրիլի 15-ին Տեղեկագրում հրապարակված Ընթացակարգի կնքված պայմանագրի մասին հայտարարության համաձայն (Փ1)՝ Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած ընկերություններից մեկը «Կարմա Գրուպ» ՍՊ ընկերությունն է (ՀՎՀՀ՝ 01335546), որը Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Կոնտրֆորս» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 09104565) հետ համատեղ:

Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի՝ 2023 թվականի մարտի 20-ից «Կարմա Գրուպ» ՍՊ ընկերության տնօրեն է հանդիսանում Սամվել Աշոտի Զաքարյանը (Փ2):

Ծառայությանը հասանելի տեղեկատվական շտեմարաններում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ «Զաքարյան Շին» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 01329251) 2023 թվականի սեպտեմբերի 8-ից մինչև 2025 թվականի սեպտեմբերի 8-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ուշագրավ է այն, որ «Կարմա Գրուպ» ՍՊ ընկերության տնօրեն Սամվել Աշոտի Զաքարյանի և «Զաքարյան Շին» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ «Կարմա Գրուպ» ՍՊ ընկերության տնօրեն Սամվել Աշոտի Զաքարյանը 2022 թվականի հոկտեմբերի 14-ից մինչև օրս հանդիսանում է նաև «Զաքարյան Շին» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասի բաժնետեր և տնօրեն:»

3. ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից 22.07.2024-ին ստացվել է № 03/26-1/16004-2024 գրությունը, համաձայն որի՝ «121-րդ կետի համաձայն՝ մասնակցի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերության համաձայն մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին.

32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում»:

4. Անհրաժեշտություն է առաջացել նախաձեռնել ընթացակարգ՝ «Կարմա Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

2. Պատվիրատուիղեկավարիհիմնավորումներընևեզրահանգումը.

Մեծամորի համայնքի ղեկավար՝ Վ. Խաչատրյանս (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար), ուսումնասիրելով Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարիկողմից ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Այսպիսով՝

«ԿԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված Ընթացակարգին ներկայացվել է մասնակցության հայտ:

«ԿԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի փոխկապակցված անձանց գնումների գործընթացին իրավունք չունենալու վերաբերյալ ստացվել է տեղեկատվություն ՀՀ Պետական վերահսկողական ծառայության և ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից նախաձեռնվել է ընթացակարգ, վերոնշյալից ելնելով ձեռնարկվել են միջոցներ մասնակցին գնումներիգործընթացինմասնակցելուիրավունքչունեցողմասնակիցներիցուցակում ներառելու վերաբերյալ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացրած հիմքերը՝ «ԿԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:

2. «ԿԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկելլիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը,«ԿԱՐՄԱ

ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2024 թվականի ՕԳՈՍՏՈՍԻ 09
ք.Մեծամոր

Հավելված 1
Մեծամոր համայնքի ավագանու
2024 թվականի հունիսի 25-ի
N 235-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մասնակցի | | | | | | | | | |
| Անվանումը | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
|